2. Ազատ կամ հոտային զուգավորում.—Այս գեղքում խոյերը լինում են հոտի մեջ մաքիների հետ և նրանց հետ զուգավորվում են առանց խորության, յերբեմն միենալին վոչխարի հետ զուգավորումը տեղի յեւ ունենում մի քանի անգամ, կովում են իրար հետ, խանգարում են զուգավորումը. յերբեմն վիրավորում են իրար, վորի հետեանքով խոյերը աբագությամբ մաշվում են, բեղմագորումը կատարվում և զատ և շատ մաքիներ մնում են ստերջ: Ազատ զուգավորման գեղքում տոհմացու խոյեր և մաքիներ բնարեյր անհնար են, վորովհետեւ հայտնի չեն. թէ մո՛ր խոյին և բնագմնագորել այս կամ այն մաքին, և չի կարելի խուսափել ազգակցական բուծումից:

3. Դասային զուգավորում.—Այս ձեկի զուգավորումն այն է, յերբ վորոշ զատ վոչխարների համար նշանակված խոյերը ման են զալիս նրանց հետ միասին և զուգավորում են, յերբ բեկ են զալիս: Սակայն դասային զուգավորման գեղքում ել խոյերն ոգտագործվում են վոչ այնքան լավ, վորքան ձեռքի զուգավորման ժամանակ, վորովհետեւ զուգավորումների թիվը հնարավոր չեն հաշվի տոնել: Խոյերի ուժերը պահպանելու համար նրանց բաժանում են 2 խմբի, ըստ վորում մի խումբը մաքիների հետ լինում և մի որ, մյուս խումբը՝ հետեւյալ որը և այսպիս հերթափոխվում են: Զուգավորման շրջանում խոյին բացի սովորական կերից տալիս են նաև 0,4-0,6 կիլո վարսակ կամ գարի, վորպեսզի չթուլանա:

Ի՞նչքան ժամանակ են ծառայում տոհմացու խոյերն ու մաքիները.—Տոհմացու խոյի և մաքու ծառայության տեսքությունը կախված է զլիսավորապես նրանց առողջությունից և կանոնագոր ոգտագործելուց: Խոյերն աշխատում են 5-6 տարի, իսկ մաքիները մինչև 5-րդ դար բերելու:

Վոչխարների բնիստետովկա.—Մեր վոչխարների հոտերը նայելիս կնկատենք, վոր նրանք շատ խայտարկետ են, թե՛ մեծության, թե՛ բրդի վորակի ու առատության, և թե չաղության կողմից և այլն, վորովհետեւ տոհմացու արտադրողների բնարություն համարյա թէ չեւ լինում:

Նորմալ կողմվածքով, խոչոր, լավ և առատ բուրդ ունեցող մաքիների և խոյերի հետ միենալին հստամ պատմամամ են հաճախ ցածրահասակ, արատավոր կողմվածքով և կոպիտ բրդով վոչխարները: Եռյնպիսի խոյերը գետարգետ անոք ունեն զառներն ու մասզաշ վոչխարները: Անձրսժեշտ և ամեն աարի կատարել հասակավոր վոչխարների, խոյերի և զառների բոնիանավկատ, ույթինքին բնարել իրեն առնմացու ամենալավ, խոչոր, լավ կողմվածք անեցող, լավ և առատ բրդով և կերը լավ ոգտագործ վոչխարներ, խոկ բուրդ պատափ, արատավոր կողմվածք և կոպիտ բրդով անեցողներին պետք և խոտանել և հեռացնել հստից:

Բոնիանավկան և խիստ բնարությունը հնարավորություն են աալիս վոչխարարություններին մի քանի աարված բնթացքում վոչխարների հստերը միաարար դարձնել և բարձրացնել նրանց արատավորվականությունն ու շահավետությունը:

Նախքան վոչխարների բոնիտետովկան սկսելը, անհրաժեշտ և վորոշել, թե ովյալ հոտում վոչխարաբուծության ուղղությունն ինչպիսին պիտի լինի—բրդառու: Մատու, կարնատու, թե՝ մորքատու և այլն:

Հաստեկավոր վոչխարների բոնիանավկատ ժամանակ համարած միշտ նկատի ին անենում բավացնել կոմաղել մաքիների պակասությունները՝ խոյերի համապատասխան առավելաթյուններով: Մաքիների և խոյերի բոնիանավկան ամելիի լավ և կատարել ըստ նրանց առնմական արժանիքի և վոչթե ախպի, վորովհետեւ այդպիսի բոնիանավկայի միջոցով ավելի արագ կարելի յեւ լավացնել վոչխարներին: Վոչխարների բոնիանավկան պետք և կատարի մասնագետը կամ այդ գործից հասկացող հրահանգիչը:

Վո՞րտեղից գյուղացիք կարու են ձեռք բերել լավ տոհմացու խոյեր.—Յուրաքանչյուր վոչխարարուծական շրջանում կան լավ, փորձված վոչխարապահներ, նրանք, չնորհիվ, լավ կերակրելու և խնամքի, ունեն բավացք, խոչորացք և բարելաված վոչխարներ: Ահա այդպիներից պետք և գնել առնմացու խոյեր⁹⁾: Տեղական

⁹⁾ Ավելի լավ և գիմել պետական անառնարուծարանին:

ցեղի խոյեր գնելիս պետք և նկատի ունենալ, վոր ցածրադիր և նախալեռնային գոտիներում պահպաղ վոչխարների համար պետք և գնել նույն ցեղի խոյեր նույն գոտիներում պահպաղ, վորովհետեւ այդ գոտիներում հաճախ պատահում և պիրոպլազմոս հիվանդությունը, վորին անզական խոյերը գիմանում են. իսկ արիշ չբջանից բերածները կարող են չդիմանալ և սուկել:

Շատ լավ խոյեր գնելու համար մանր վոչխարսրութները պետք և միանան և ընկերություններ կազմեն:

Արաւասահմանում—Անգլիայում, Ամերիկայում, Ավստրալիայում և այլ յերկրներում գոյություն ունեն ոյզպիսի ընկերություններ, վորոնք գնում են ցուցահանդեսներում և մրցությունների ժամանակ պարզեարգած ամենալավ խոյերը:

Վոչխարների տարիքը ատամներով վերոշելը.—Վոչխար գնելիս անհրաժեշտ և պարզել նրա առարկքը, վորը կարելի յե ճիշտ վորոշել ատամների միջոցով: (Տես նկար 7 և 8):

Հասակ առած վոչխարն ունի 32 ատամ—24 սկզբանակառում—6-ական հատ ամեն մի շարքում թե վերին և



Նկ. № 7.

12 ամսական գառան 1 $\frac{1}{2}$ ա. վոչխարի կարել ատամները .	վոչխարի կարել ատամները .	2 ա. վոչխարի կարել ատամները .
---	-----------------------------	----------------------------------

թե ներքին ծնոտներում և 8 կարիչներ ներքին ծնոտում: Վերին ծնոտում կարիչների փոխարեն կա բավականին առաձգական կոճիկանման լողարարձ, վորը փոխարինում և ատամներին:

Կաթնատամ—կարիչները դուրս են գալիս գեռ գառը

շծնած կոմ թե ծնելուց 3-4 շաբաթ հետո: Այդ ժամանակավանից կաթնառամներն առաջնարար մաշվում, բնեկնում են և փոխարինվում են մշտական առամներով, վորոնք կաթնառամներից առըրիբվում են իրենց խոշորությամբ և ամրությամբ:



Նկ. № 8

3 առ փոշխարի կորիչ առամնեն

4 առ փոշխարի կորիչ առամնեն

9-10 ամսակոտն հասակում մաշվում են 2 միջին կրտսերիչները:

1 առքեկան հասակում մնացած բոլոր կորիչները:
1 $\frac{1}{2}$ առքեկան հասակում փոխվում են 2 ներքին կորիչները (բռնիչները) և փոխարինվում մի զույգ լայն թիանման առամներով:

2-2 $\frac{1}{4}$ առքեկան հասակում փոխվում են 2 միջին կորիչները:

3 $\frac{1}{2}$ -4 առքեկան հասակում փոխվում են 2 յեղրակորիչները:

5-6 առքեկան հասակում սկսում են կորիչների առանքները բացվել և նրանց վերին մակերեսը մաշվել:

7-8 առքեկան հասակում կորիչների մակերեսը ավելի ուժեղ և մաշվում, ստացվում են կարծես թե սնկի գլխարկներ նստած բարակ կոթերի վրա և կորիչների արանքներն ավելի յեն լայնանում:

Առջևարի հղիությունը.—Հասարակ ցեղի վոչխարների հղիությունը տեսում է մոտ 5 ամիս (150-163 որ). իսկ վագահառ ցեղերինը՝ վոչ ավել քան 144-146 որ: Լինում է ծնելու յերկու գլխավոր ժամանակ՝ գար-

նաև, վորն ավելի շատ տարածված և դյուզացիոնան
տնտեսություններում և ձմբան, վորն ավելի հազվագեղ
և (շատ հազվագեղ և ամբան և աշնան ծնելը):

Գարնան ծնելը տեղի յե ունենում գլխավորապես
մարտ-ապրիլ ամիսներին. ավելի կանուխ ծնելը սկսվում
է փետրվարի կեսից. լինում են մաքիներ, վոր ծնում են
մայիսի սկզբին: Գարնան ծնելը դյուզացիների համար
ամենահարմարն է, վորովհետեւ մաքիների համար այդ
ժամանակ կա առատ կանաչ կեր. հենց գառներն ել, մի
քիչ մեծանալուց հետո, սկսում են ողտվել ամարային
արտաներից: Այն գառները, վորոնք գարնանը սկսում են
ողտվել ամարային արտաներից, արագ են աճում, լայ
են գարզանում և դառնում են աճուր ու դիմացկուն կեն-
դանիներ:

Զմրան ծնելը.—Գյուզացիք սրանից խուսափում են,
ուստի և այդ տեղի յե ունենում յերբեմն իրեն բացա-
ռության: Թե մաքիներին և թե նոր ծնած գառներին
ձմբանը կերպակելը թանգ և նստում. բացի այդ, գառ-
ների համար պետք ե ունենալ ավելի տաք շենք, վոր-
պեսպի չմրսեն:

Գառները ծնվում են զանազան մեծությամբ. այդ
կախված ե ցեղից, մաքու մեծությունից, նրան կերպակ-
րելու չափից: Մեկ հատ ծնվելու գեպքում գառները միշտ
ավելի խոշոր են լինում, քան յերկիրյակ և յեւլորյակ
ծնած գեղքում: Նոր ծնած գառնին թողնում են, վոր
մայրը լիզի. բայց կարիք չկա այդ ժամանակ գառան
վրա ալյուր կամ աղ ցանել, յեթե մայրը հաճույքով չի
լիզում, պարզապես հարկավոր ե գառի մարմինը չոր
լաթով սրբել—ցամաքեցնել: Յեթե գառան պորտի կապը
չի պոկիվել, պետք ե կտրել այն և թողնել միայն 2 մաս
յերկարությամբ, ապա լվանալ կարբույան թթվուաթի
թույլ լուծույթով: Գառը ծնելուց քիչ հետո դուրս ե գա-
լիս և ընկերքը, վորը հարկավոր ե խսկույն և թ հե-
ռացնել փարախից:

ՎՈՉԽԱՐՆԵՐԻ ԿԵՐԱԿՐԵԼԸ

Հզի վոչխարների կերակրելը.—Հզի մաքիներին պետք է սկսել լավ կերակրել, չենց ձմեռվանից, լավ խստավ և քիչ քանակությամբ հացահատիկով (ժարուակ կամ գարի), քուազով կամ թեփով, տատիճառարար ավելացնելով ուժեղ կերերի քանակությանը, վորպեսզի նրանք ձմբան ընթացքում չլդարին և գարնանը ծնելիս բավական կաթ առնենան իրենց գառների համար:

Հզի վոչխարներին չպետք է տալ մեծ քանակությամբ կոպիտ, մեծածավալ կեր. չպետք է տալ նաև շատ արժանապատղ, վորովհետեւ զրանից կարող են զառնառել: Զի կարելի նաև նրանց չափից ավելի կերակրել և չազացնել, վորովհետեւ այդ գեղգում մաքիները ծնում են փոքր, թույլ զառներ, իսկ յերբեմն ել ստերջ են մրում, վորի չորչիվ վոչխարատերը վնաս է կրում: Առանձնապես պետք է զգուշանալ և հզի վոչխարներին շատ բորբոնած, սառած, հոտած և փչացած կերեր, վորովհետեւ արդպիսի կերերից հզի վոչխարները կարող են փորլույթ ստանալ և զառնատել: Պետք է խուսափել այն բորբորից, ինչ վոր կարող է վիթելու պատճառ զառնալ, որինակ՝ հարգածներից, նեղ զոների միջով քշերաց և այլն: Յերբ մստենում և ծնելու ժամանակը, հզի վոչխարներին ուժեղ կերի չափը պահպանեցնում են և տալիս են միայն |—|, և կիլո լավ խոտ և մի քիչ ել թեփ:

Լավ կլինի հզի մաքիներին առանձնացնել մյաս վոչխարներից և պահել տաք շենքում, վորտեղ չկա միջանցուկ քամի, վորպեսզի նորածին զառները պալահով լինեն ցրտից և մրսելուց: Գյուղատնտեսներն ասում են, վոր զառներին կերակրել պետք է սկսել հենց այն ժամանակվանից, յերբ նրանք գեր զանվում են իրենց մոր արգանգում: Մրանով ուզում են ասել, վոր հզի վոչխարին պետք և լավ կերակրել, վորպեսզի նա կարողանա իր

ստացած սնունդի մի մասը հատկացնել իր արգանդի պաղին:

Գառների կերակրելը .—Սկզբում գառներին կերակրում են միայն մոր կաթով, վորք նանց համար շատ անհրաժեշտ է, վորովհետեւ նաև շատ հարուստ և սպիտակուցային նյութերով ու հանքային աղերով և վորն ուրիշ վոչ մի կերով չի կարելի փոխարինել այդ շրջանում։ Առաջին որերը թողնում են, վոր գառը մորք ծծի որվա մեջ մեջ անդամ, հետո, յերբ նա մի քիչ մեծանում և ամրանում է, սկսում են ծծեցնել և անդամ, իսկ հետագայում, յերբ գառն սկսում և արածել և ուրիշ կեր ուտել, թողնում են, վոր մորք ծծի որը շանգամ՝ վոչխարիներին կրթելու ժամանակ։

Գառ բերելուց մի շաբաթ հետո սկսում են մաքուն արգող ուժեղ կերի չափու ավելյացնել։ Յեթե մոր կաթը չի բավականացնում իր գառան, այդ գեպքում կամ ուրիշ շատ կաթը անեցնող մաքու յեն ծծեցնում, կամ թե՝ գառին կերակրում են կովի կամ այծի կաթով։ Վերջին գեպքում գառին պետք ե տալ միշտ տաք և մաքուր կաթ՝ մաքուր ամանի մեջ։ չպետք ե տալ թթված կաթ, վորովհետեւ դրանից կարող են գառները փորլույծ և մարսողության խանդարում ստանալ։

Գառին պետք ե հենց սկզբից ևեթ լավ կերակրել, թե չե փոքր կմնա, լավ չի աճի, իսկ հետագայում նույնիսկ լավ կերակրելիս այլես չի մեծանա, կմնա մանր և կրպառնա վոչ արտադրողական կենդանի։

Վատ կերակրված գառը հետագայում դառնում և կերը վատ ողտագործող, հետեարար և վնասարեր վոչխար։ Ընդհակառակը, մատղաշ հասակում լավ կերակրված վոչխարը հետագայում ցուցարերում ե բարձր աբտագրողականություն և լավ ե դիմադրում հիմանդրություններին։

Չորրորդ շաբթից հետո գառին կամաց-կամաց սուվորեցնում են լավ փափուկ խոտի և արոտի։ Կաթից կսնած խոտին և չոր կերերին պետք ե անցնել աստիճանաբար՝ 1—2 շաբաթվա ընթացքում, այլապես գառի մարսողությունը կարող ե խանդարվել։ Իսկ արոտ պետք ե բաց թողնել այն ժամանակ, յերբ արդեն խոտի վրայի ցողը դոլորշիացել ե։ Հենց այս հասակից ել սկսում են

գտուին կերցնել ջարդած հացահատիկ, քուսով, թեփ և
այլ՝ տաք լափի ձեռվէ: Այդ ժամանակվանից ել զառ-
ներին թողնում են արտա արածելու. սկզբում 1—2 ժամ,
իսկ հետո՝ որեցոր ամելացնում են արածելու տեսպո-
թյունը: Եախքան արտա բաց թողնելը գառներին թեթև
կերակրում են չոր կերավ: Գառներին պետք և արածաց-
նել բարձր, վոչ խոնավ արտաներում, խուսափելով խո-
նավ և ճահճային տեղերից, վորովհետեւ այդպիսի ա-
րտաներում գառները կարող են հիվանդանուր չատ վր-
տանկավոր քայլանակ հիվանդաթյամբ, վորից շտան-
բր կստորիւմ են: Զի կարելի ցուրտ և անձրեային յե-
ղանակներին գառներին ուղարկել արտա, վորովհետեւ
կարող են մրսել, պետք և կերակրել տանը՝ կանաչ խո-
տով կամ լավ չոր խոտով: Յերեկվա չով ժամանակ գտու-
ներին պետք և տանել շվաք տեղ: Գառներին չի կարելի
արածեցնել նաև խիստ ցուրտ քամիների ժամանակ: Գառների համար պետք և ընտրել լավ հարթ արտատե-
ղեր—հովիզների կեցած տեղից վոչ հեռու: Յերբ գտու-
ները մի քիչ արգեն մեծացել են, ովտակար իլինի նրանց
շաբաթը մի անգամ աղ տալ, վորը լավ և ազգում նրանց
ժարառզության վրա: Ցանկալի կլինի տալ նաև մի քիչ
վոսկորի ալյուր, վորպեսզի նրանց վոսկորները լավ
դարձանան: 3—4 ամսական հստակից գառներին կամաց-
կարում կարում են ծծից, իսկ հինգերորդ ամսում բոլո-
րովին բաժանում են իրենց մայրերից: Միաժամանակ
բաժանում են եղ գառներին արուներից և առանձին-ա-
ռանձին են արածացնում, վորպեսզի անժամանակ զու-
գավորում տեղի չունենա, վորովհետեւ դա վաս և աղ-
ղում մատղաչ, զեռ չզարդացած կենդանիների վրա և
այլպիսի գեպքերում ստացված սերունդը լինում և
թույլ և փոքր:

Բրդատու և մարքատու ցեղերի գառներին կերակ-
րում են բավականի աղքատ. նրանց տալիս են գլխավո-
րապես խոտ և մի քիչ քուսապ կամ հացահատիկ. կերակ-
րումը պետք և լինի ամբողջ տարին հավասարաշափ: Այդ
գառներին չպետք և տալ շատ ջրառատ կերեր, վորովհե-
տեւ դրանք վատ կազդեն նրանց բրդի վորակի վրա: Զը-
պետք և նաև արածացնել նրանց անձրեային յեղանակ-
ներին, վորովհետեւ անձրեից փչանում են նրանց բուրդն
ու մորթին:

Մասցու և կաթնատու ցեղերի գառներին կերակրում են ամելի լավ, քան բրդատուներին։ Նրանց ավելի յերեսը ժամանակ թողնում են մորը ծծելու և մատղաշատակում ավելի լավ են կերակրում ուժեղ և ջրառատ կերերով, վորպեսզի նրանց մեջ զարդանա վաղահասություն և լավ մաստվության ու կաթնատվության հատկությունները։ Այս ցեղերի գառներին պետք է առաջ ամելի շատ ուժեղ կերեր, վորոնք պարունակում են շատ սպիտակուց և հանքային նյութեր։ Գառներին մատագ հասակում ինտենսիվ կերակրելն ունի մեծ նշանակություն, վորովհետեւ այդ գեղփում որդունիզմն ավելի արագ և աճում և նրա առանձին վործարաններն ընդունակ են գառնում մեծ քանակությամբ եժանագին կերերը վերածել ամելի թանգարժեք նյութերի՝ մսի և ճարպի։

Մեզ մոտ գյուղացիներն իրենց վոչխարներին վատ են կերակրում։ Նրանք համարյա ամրող տարին վոչխարներին արածեցնում են, բացառությամբ յեւնային չրջանների։ Քիչ և պատահում, վոր մի քիչ ել խոտ կամ դարձան առն։ Զմրանը մեր վոչխարները վատ կերակրելուց խիստ նիշարում են ու հյուծվում և միայն զարնանը սկսում են ուզդմել, յերբ կանաչ տրոտի յեն դուրս գայիս։ Մեր գյուղացիական վոչխարները ձմրան մշտական կիսաքաղցության և քարքարուտ ճանապարհներով հարյուրավոր վերստեր կրտրելով գեղի ամարային և ձմերային արոտատեղերը՝ մանրացել և այլասերպին են։

Գյուղացիներն իրենց վոչխարներին կերակրում են առանց հաշվի։ — Նրանք ձմեռվա կերերի պաշար քիչ ունեն։ յեղածի մեծ մասն ել ատալիս են լծկան և կաթնատուավարին, այնպես վոր վոչխարների համար մնաւմ եքիչ խոտ, դարձան և տավարի թերմացք (կռճոնք)։ Իսկ յեթե գյուղացին կեր շատ ունի, այդ գեղփում նա տավարին տալիս և այնքան, վորքան նա ուտում է։ Վոչխարներին կերակրում են գեանի վրա, այդ պատճառով շատ կեր և փշանում ու կեղտոտվում։

Կերերի պակասության և ձմեռվա արոտ չունենալու պատճառով գյուղացիք վոչխարներին արածացնելու համար առանձին հողամասեր (զորուղներ) են թողնում, վորոնք մնում են մինչև ձմեռ։

Վոչխարատերերն աշխատամք են այդ զորացներում
մի կերպ կերակրել իրենց վոչխարները մինչեւ ձմեռվա
վերջը և կանուչ խօսի գուրս զալը: Վոչխարատերերի
այն մասը, վոր ձմեռվա արսա շտմնի, իր տավարն ու
վոչխարը պահում և ձմեռանցներում—անտառում, վո-
րի հետեանքով խխառ տուժում և անտառի բռասականու-
թյունը և վորի գեմ Հողմովկամար ներկայումս կարուկ
միջոցներ և ձեռք տանում:

Վոչխարների կանոնավոր կերակրումը:—Վոչխար-
ներին կանոնավոր կերակրելու նպատակն է ստանալ նր-
բանցից, վորքան հնարավոր և, շատ միտ, կաթ, բարդ,
մորթի և առողջ սերունդ: Իսկ խոյերին կանոնավոր կե-
րակրելու նպատակն է, զլխավորապես, նրանց տաղո-
ջությունը և սեռական ուժը լավ գրաթյան մեջ պահելը
և նրանց ավելի յերկար ժամանակ սպասարկործել:

Վոչխարներին կանոնավոր կերակրել—նշանակում է
նրանց կեր տալ շափով, այսինքն՝ համաձայն նրանց
կենդանի քաշի և արտագրողականության (արտաղ բած
կաթի, մսի, բրդի և այլն): Չի կարելի նրանց կեր տալ
ուղածի չափ, վորովհետեւ այս գեպքում ի զուր ուղը
կերի մի մասը կկորչի, բացի այդ, նրանք չափից գուրս
տառիով՝ կչաղանան և կտան փոքր ու թույլ սերունդ:
Իսկ յեթե վոչխարներին վաս են կերակրում, նրանց չեն
տալիս անհրաժեշտ չափով կեր, այդ գեպքում կիսու-
քաղց մնալու հետեանքով լզարում են և նրանց արտա-
գրողականությունն ել պակասում է:

Գյուղատնտեսական կենդանիներին արվող կերերը
բաժանվում են յերեք զլխավոր խմբի—կոպիտ, ջրառատ
և ուժեղ կամ խտացրած կերեր:

Կոպիտ կերեր:—Այս խմբի մեջ են մանում խոսար,
գարմանը, մզեղը, բամբակի հունդի կճեպը և ուրիշ կե-
րեր, վորոնք պարունակում են շատ քիչ սպիտակուց,
բայց շատ հարուստ են թաղանթանյութով: Վոչխար-
ներն այս կերերը լավ են ուտում: Բրդատու և մորթա-
տու վոչխարները կարող են ձմեռը բավականանալ լավ
խոսար, իսկ գարմանը սիրով չեն ուտում: Պետք է ու-
շագրություն գարձնել, վոր կերարամնի մեջ վոչ միայն
լինեն բավարար քանակությամբ սննդարար նյութեր,
այլ և կոպիտ կերի քանակությունը լինի այնքան, վոր

վոչխարի ստամոքսը բազմաբար շափով լեցվի, հակառակ գեղքում նու կարող ե գաղարել վորոճալուց և հիմանդրանայ: Վոչխարին տալիս Են որեկան վոչ ավելի, քան՝ 3—3 $\frac{1}{2}$ կիլո կոպիտ կեր, իսկ ամենաքիչը՝ պետք և լինի 1,5—2 կիլո տմեն մի գլխին: Խոտի վորակը կախված և նրա մեջ յեղած խոտի բույսերի տեսակներից, խոտի հավաքելու ժամանակից, յեղանակից, այն պահելու ձեզից և այլն: Լավ խոտը պարունակում է ավելի շատ թիթեռնածաղկի և հացազգի խոտարույսեր, վորոնք պետք է հավաքված լինեն ժամանակին, չոր յեղանակին և շրապեար և փշանա պահելու ժամանակ: Լավ խոտ ստացվում է լիսնային խոտհարքներից և ցանովի խոտերից: Վատ խոտը՝ անտառից և ճահճային տեղերից: Լավ, մանր գարման ստացվում է գարնան ցորենից և գարուց: Բամբակի հունգի կճեպով կարելի յե փոխարինել խոտի կամ գարմանի մի մասը. նու իր կերարժանիքով հավասար և գարմանին:

Զքառատ կերերն են կանաչ խոտը, արմատապրտուղները (ճակնդեղ, գազար, շաղզամ, գոնդեղ), պարապատուղները (կարտոֆիլ, գետնախնձոր), զդում և այլն: Այս կերերն ավելի հարմար են մսացու և կաթնատու ցեղի վոչխարներին կերակրելու համար:

Ուժեղ կերերն են զանազան քուսպերը, հացահատիկները, թեփերը, ալյուրներն և այլն: Սրանք համարվում են ամենալավ կերերը, վորովհետեւ պարունակում են շատ սպիտակուց և քիչ թաղանթանյութ: Ուժեղ կերերը տալիս են մեծ մասամբ մատղաշ աճող կենդանիներին, մսացու և կաթնատու վոչխարներին, վորովհետեւ նրանց անհրաժեշտ և ավելի մեծ քանակությամբ սպիտակուց:

Վոչխարին տալիս են ուժեղ կեր որական մեկ կիլոգրամից վոչ ավելի: Բացի հիշված կերերից իրքի կեր գործադրվում են նաև շաքարի, գարեջրի և սպիրուի դործարանների մնացորդները: Գյուղատնտեսները հաշվել են, վոր 1 կիլո գարին իր սննդարժեքով հավասար են կիլո քուսպի, 1 կիլո ալյուրի, 1 կիլո հատիկի, 1 $\frac{1}{4}$ կիլո թեփի. 3 կիլո լավ խոտի, 2 $\frac{1}{2}$ կիլո առվույտի, 4 կիլո գարմանի, 8 կիլո ճակնդեղի կամ գազարի, 4 կիլո կարտոֆիլի, 14 կիլո կանաչ խոտի, 10 կիլո դդումի և այլն:

վաչխարներին փարախում նորմայով կերակրելը .— ռիշտ կորարտութիւն կազմելու համար սովորաբար կենդա- նիներին արգուց կերը բաժանում են յերկու մասի—մեկը կոչվում է կենսապահ կեր, մյուսը՝ արդյունաբեր կեր:

Կենսապահ կեր կոչվում է կերի այն քանակը, վոր արգում և վաչխարին միմիայն նրա համար, վոր նու իր կյանքը պահպանի, մնա առողջ և քաշը վոչ ավելանա և վոչ ել պակասի: Կենսապահ կերը բազկացած և լի- նում զիշխավորապես կողիտ կերերից: Իսկ սովորաբար կերարտունի կեսը բազկացած և լինում կողիտ կերե- րից, մյուս կեսը՝ ուժեղ կերերից:

Վաչխարին նորմայով կերակրելիս պետք է նրան տալ որական կենսապահ կեր իր կենդանի քաշի ^{1/20}-րդի չափ—իրրե խոս: Արինակ՝ յեթե վաչխարի կենդանի քաշն և 60 կիլո, առա նրա ^{1/20}-րդ մասը կլինի 2 կիլո, Հետեւարար այդ վաչխարին պետք և տալ միայն կենսա- պահ կեր որական 2 կիլո խոս:

Արդյունաբեր կեր կոչվում է կերի այն քանակու- թյունը, վոր տալիս ենք վաչխարին, բացի կենսապահ կերից, այն դեպքում, յեթե այդ վաչխարը տալիս և կտթ, կամ յեթե մենք ուզում ենք, վոր նա միս կամ ձարպ կազի, առատ և լավ բուրդ ունենա և աչին: Յեն- թագրենք, թե մեր վաչխարի կենդանի քաշը 4,5 կիլո յե- ն և առալիս և որական 1 լիտր կաթ: կենդանի քաշի ^{1/20}-րդ մասը կազմում է 1,5 կիլո. Իսկ ամեն մի լիտր կաթի համար պետք և տալ 0,4 կիլո զարի. Նշանակում և այդ վաչխարին պետք և տալ 1,5 կիլո խոս և 0,4 կիլո զարի:


Խոյերին ավելի լավ են կերակրում, քան մաքինե- րին.—Նրանց տալիս են կենսապահ կեր իրենց կենդանի քաշի ^{1/20}-րդի չափ. որինակ՝ յեթե խոյի կենդանի քաշը 60 կիլոգր. և, ուրեմն նրան հասնում է 3 կիլոգր. խոտ. բայց տալիս են 1,5 կիլոգր. խոտ, իսկ մնացածի դիմաց 0,5 կիլոգր. զարի: Զուգավորման ժամանա- կացը ջանում խոյը ստանում և լրացուցի 0,4-0,5 կի- լոգր. զարի կամ վարսակ:

Վաչխարներին պետք և կեր տալ նրանց համար հատկապես ձաղերով շինված մսուրներում (աես նկ. № 9 և 10) և վոչ թե կերը լեցնել զետնին, վորտեղ

շատ մասն բնկնելով վոչխարների վոտքերի՝ տակ փշունում և և կամ կեզառավում և՝ խառնվելով փթիրի հետ:


Վոչխարներին աղ տալիս են շարաթը մեկ անգամ. ջրում են որական 2 անգամ:

Մաքիներին և խոյերին փարախում կերակրելու կարգը.—Կերը պետք է տալ որական յերեք անգամ— սոսավոտյան, կեսորին և յերեկոյան։ Սկզբում տալիս



Նկ. № 9

Յերկարագուն մուր՝ ոտքերով ա՛ մուր ամբողջ տեսքով. Ե՛ միջի մասի կորպածքը



Նկ. № 10

Պատի վրա ամբացը մուր

Են ուժեղ կեր, ապա ջրառատ և վերջը՝ կոպիտ կերեր։ Կերերն այդ կարգով տալն այն խմաստն ունի, վոր սոսամօքսի հյութերը սկզբում ավելի ուժեղ լինելով՝ ավելի եներգիկ կերպով կազդեն ուժեղ կերերի վրա և կնապատեն նրանց լավ մարսելուն։

ՎՈՉԱԱՐԻ ԱՄԱՅԱՅՅԵՆ ԿԵՐԱԿՐՈՒՄԸ

Անդրկովկասի ամարային արոտավայրերը .— Էամ են համարիտւմ այն արոտավայրերը, վորոնք իրենց ամբողջ տարածությամբ մատչելի յեն վոչխարների արածելու համար, անեն լավ ճանապարհներ, բավարար քանակությամբ խմելու լավ ջուր թե՛ վոչխարների և թե՛ հովիտների համար: Էամ արոտավայրերի բուռկանությունը մեծ մասամբ պետք է բազկացած լինի թիթեռնածաղիկ և հացաղղի խոտերից: մորխխոտեր և թունագոր խոտեր չպետք է լինեն: Աքուում պետք է հարժարություն լինի վոչխարներին շոգից, ուժեղ քամիներից և այլ բնական պատահարներից պաշտպանելու համար:

Անդրկովկասի յենային և ալպյան արոտավայրեր, վորոնք մի ժամանակ հոչակված եյին իրենց հարուստ բուռկանությամբ, այժմ աղքատացել են. նրանց վրա ներկայումս արածում են մեծ քանակությամբ տավար ու վոչխար, վորոնք ուտում և արոբում են այդ արուները: Սրանց վրա սկսել են ուժեղ կերպավ աճել մորխխոտեր և թունագոր խոտեր, իսկ տեղ-տեղ ել ծածկվել են քարերով: Մեր մի քանի ամարային արոտավայրերում, որինակ՝ Ազմաղանի, Թարսաչայի և ուրիշ արոտների վրա, պատահում են ընդարձակ քարակույտեր, վորոնք կոչվում են չինգիլներ, վորոնք տեղ-տեղ մի քանի վերսու յերկարություն ունեն և հաճախ խանգարում են վոչխարներին ջրի մոտ կամ հարեան արոտատեղը քշելու, այդ պատճառով ստիպված են մի քանի վերսու շրջան անելով գնալ ցանկացած տեղը: Ամարային արոտավայրերի ցածրադիր գոտիները, վորոնք գտնվում են ծովի մակերեսույթից 4500-5000 ֆուտ բարձրության վրա, անեն թեր մակերեսույթ, ծածկված են լավ կանաչով, այնպես վոր մեծ հաջողությամբ նրանց կարելի յեր ողտագործել իբրև խոռհարք, և վոչ թե արօտատեղ: Մանավանդ վոր մեր հանրապետությունը խոտի մեծ պակասություն և զգում և ստիպված և դրսից խոռ ներմուծել:

Ամարային արոտավայրերի միջին և բարձր գոտիներում պատահում են հողամասեր, վորոնք կամ ամբողջովին զարել են բուռկանությունից, կամ թե նրանց

վրա մնացել են աղքատ բուսականության մնացորդներ։ Աերեմն մի քանի վերստ տարածության վրա արոտատեղերի հողը, ինչպես որինակ Մազրագյունեյի, Թարուչայ և այլն, ամրողջովին զուրկ և բուսականությունից։

Ամարային արոտների այն ժամերում, վորտեղ ըընակվում են քոչվորները, ուժեղ կերպով աճել են փշավոր բույսեր (յեղին և այլն) և այլ մոլախոտեր։

Մեր ամարային արոտատեղերի հյուսիսային և Հյուսիս արեւելյան լանջերը, վորոնք կոչվում են գյուղեյի (գուղեյի), աշքի յեն ընկնում իրենց բարձր, բայց վոչ աննպարար բուսականությամբ, վորի մեջ պատահում են շատ մոլախոտեր և թունավոր բույսեր։ Հարավային և Հարավ-արեւմտյան լանջերում, վորոնք կոչվում են գունեյի, ունեն կարճ բուսականություն, բայց դրա փոխարեն շատ աննպարար և և մոլախոտերով ել այնքան հարուստ չե, ինչպես հյուսիսային լանջերում։ Վոչխարներն այդ կարճ բույսերն ուտում են հաճույքով. այդ հանդամանքը լով հայտնի յէ հովիվներին և վոչխարատերերին։

Մեր լեռնային արոտավայրերում ոգտակար խոսերից հանախ պատահում են հետևյալ թիրեռնածաղիկ և հացազգի շատ սենդարար բույսերը. — վայրի երեքնուկ, առվույտ, կորնզան, վիկ, վոչխարավարսակ և այլն։

Իսկ մոլախոտերից և թունավոր բույսերից առանձնակես մնասակար և համարվում լեռնային ճիլ խոտի (ուշա) մի տեսակը, վորը նրանք անվանում են «գալիսթ», այսինքն՝ գիծ խոտ։

Մեր գյուղացիական վոչխարները ամարային արոտավայրերում կերակրվում են նույնպես անբավարար։ Վոչխարներն այնուեղ կուշտ արածում են միայն զարնանը և ամառվաս սկզբին, ընդամենը $2\frac{1}{2}$ ամիս, քանի դեռ խոտը կանաչ և հյութալի յէ. այդ ժամանակամիջոցում նրանք գիրանում են և ճարպապոչն ել մեծանում-ծանրանում ե։

Գյուղացիներն իրենց տավարն ու վոչխարը շատ անկանոն են արածացնում։ Ամրողջ տավարն ու վոչխարը, յերեմն 500—600 գլուխ միանդամից, քչում են արոտատեղ արածելու, յերը դեռ բուսականությունը

նոր և սկսել բարձրանալ և զեռ չի արժատակարել։ Արտօնելու ընթացքում այդ թույլ բառականությունը մասմբ ուստիում է, իսկ մեծ մարք վասնակոխ և լինում։ Տայարին ու վոչխարներին արտօնի յեն զորս բերում այն ժամանակի, յերբ հոգը ձյունահալից զեռ չի չորսցել, վորի հետանքով խօնաց հոգը արորդում է պրեգանում է, իսկ կենզանիների կոխած անզերում յանում է ջուրը և առաջ են դալիս թմրեր։ Այդ պատճառով և ոգտակար բոյցերը թույլ են մնում, վատ են աճում և նրանց նեղերով՝ նրանց տեղն բոնում են ավելի գիմացկուն մոլախոսերն ու չուտվող բոյցերը։

Մեր ամարային արոտավայրերը չեն ոգտագործվում իրենց վորակի համաձայն։—Արոտամտուերը տարբեր տեսակի կենզանիների միջին բաշխելու սովորություն չկա։ Վոչ ել սովորություն կա տատիճանարար, մաս-մասարած ացնելու, այլ արտօնի ամբողջ տարածության վրա միանզամից են արածեցնում, չեն թողնում, վոր նրա մի մասը հանզատանա, նրա վրայի բուսականությունը նորից աճի-բարձրանա։ Բացի արոտների փշանալուց ու աղքատանալուց, վոչխարներն ել կանոնավոր չեն արտծում, վորովհետեւ մեր հովիվներն ել արածեցնելու յեղանակին ծոնոթ չեն։

Սովորաբար մեզ մոտ հովիվ են վարձում վոչ թե փորձված մարդկանցից, վորոնք դիտեն վոչխարն արածացնելու յեղանակը, այլ անզիակակից, անփորձ դյուզական ջահելներից, վորոնք ուրիշ աշխատանքների հոմար անբնդունակ են համարվում։

Մեզ մոտ աշխատում են հովիվներին վորքան կարելի յե եժան վարձել։ Նրան վարձատրում են դիլավորակես վոչխարով։ տալիս են վորոց քանակությամբ գտո կամ թոխիք, տալիս են նաև յափնջի, հագուստ, տրեխ, ալյուր, աղ և այլն։ Շատ քիչ ե պատահում, վոր փող վճարեն։ Մինչդեռ ատասահմանում մեծ ընտրությամբ են վարձում հովիվներին։ Վարձում են փորձված, վոչխարապահության հետ լավ ծանոթ մարդկանց, վճարում են նրանց մեծ ոռնիկ և առանձին պարգևներով շահագրգռում են նրանց, վորպեսզի վոչխարներին կանոնավոր արածեցնեն, լավ խնամեն և արտաները պաշտպանեն փշանալուց։ Լավ հովիվը նախ-

քան վոչխարներին արածելու հանելը, մանրամասն աչքի յեն անցկացնում արածելու համար նշանակված արոտամասը, իբ համար ծրագիր և կազմում, թե ի՞նչ պես արածացնի, վորագեղի և՝ արոտը յավ սպազործվի և՛ վոչխարները կուշտ ուտեն՝ առանց արոտը վրացնելու:

Յեթե յերես, վոր արոտատեղը շատ և ծանրաբեռնված և նրա վրա ավելորդ կենդանիներ են արածում, այդ ժամանակ նա խկույն վոչխարներին տեղափոխում և հարեան արոտատեղը: Ապա նա տափարին ու վոչխարներին արածացնում և այն կարգով, վոր արոտատեղին լավ կաորները բաժին ընկնեն կաթնատու և լրձկան տափարին, իսկ վորակով ավելի վատ, ավելի թեք յանջերով և ավելի աղքատ բուսականությամբ արոտատեղերը թողնում և վոչխարների համար: Վոչխարների համար հատկացված տարածությունն ել նա բաշխում և այսպէս: ամենալավ տեղերը թողնում և կթվող մարիներին, գառներին, խոյերին, իսկ վատ մասը թողնում և ամործատված և սուրահ վոչխարի համար: Նա վոչխարներին սկսում և արածելու գուրք բերել այն ժամանակ, յերբ արդեն ամարային արոտների հողը չորացել և ե նրանց վրա կանաչը բարձրացել և ամրացել և: Այնուհետեւ հովիվն այդ արոտատեղը բաժանում և մի քանի կաորների և սկսում և աստիճանաբար արածացնել, և բթով մի կաորից մյուսին անցնելով:

Այսպես կաորներով արածացնելը հովիվն ամառվարնեցքում կրկնում և մի քանի անգամ, այնուհետ վոր ամեն մի կաորը ժամանակ և ունենում հանգստանալու: Մինչեւ վոր վոչխարներն արածելով կհասնեն վերջին կաորին, առաջինների վրա խոտն արդեն նորից աճած և ամրացած կլինի և մոլախոտերն այլեւ վտանգավոր չեն լինի:

Առավոտյան, յերբ վոչխարները դեռ քաղցաց են, հովիվը արածեցնում և վատ արոտատեղերում, վորովհետեւ այդ ժամանակ քաղցած վոչխարներն ուտում են նաև վատ բույսերը, իսկ յերբ նրանք արդեն կշտացած են, հովիվը նրանց տեղափոխում և ավելի բավ կաորների վրա արածելու, վորովհետեւ կուշտ վոչխարները չեն փչացնի լավ կաորները: Լավ հովիվն յեր-

բեք վոչխարներին առաջը չի անի և քշի, այլ զնում և նրանց առաջից և արածեցնում և գանդապորեն, քայլ առ քայլ առաջ շարժվելով։ Նու յերբեք վոչխարներին չի քշի ուժեղ քամու գեմ, կամ թե նրանց չի արածացնի արեի շեշտակի ձառապայիների տակ։ իսկ յերկարանե անձրեի կամ կարկուտի ժամանակ պատապարում և նրանց ծառների կամ ժայռերի տակ և այլն։

Լով հովիվը վոչխարներին արածելու չի հանում, քանի գեռ ցողը չի գորոշչացել, վորպեսզի ցողու կոնչ ուտելուց վոչխարները չուսնեն։ Նու առաջուց խոսի պաշար և պատրաստում վոչխարների համար, վորպեսզի նրանց կերակրի, յերբ յեզանակը չորային և կամ յեթե նկատվում և, վոր վոչխարները արուաւմ չեն կրշտանում։

Ամառվա վերջին այդպիսի հովվի և՛ վոչխարներն են լավ տեսք ունենաւմ և՛ արուատեղը փշացած չի լինում, այլ լավ գրաւթյամբ մնում են հետեւայ առավա համար։ Նախաքան վոչխարներին արու ուղարկելը նրանց լավ նայում են. այն վոչխարները, վորոնց կրծդակները աճել-մեծացել են, կորում են, վորպեսզի շխանգարի նրանց քայլելուն։ Ապա առանձնացնում են բոլոր թույլերին, կազացողներին ու հիվանդներին և նրանցից առանձին հոս են կազմում և արածեցնում են հովիվների ապրած տեղին մոտեն։

Մեզ մոտ ավելի վաս դրուք յան մեջ և ձմերային արուատեղերի խնդիրը. սրանց պակասությունը շատ ուժեղ և զգացվում. — Հայ և վրացի վոչխարատերերը սոխոված են իրենց վոչխարն ուղարկել Աղբբեջանի հետափոր ձմերային արուավայրերը։

Մեր ձմերային արուատվայրերի տարածությունը մեծ չի։ Ամենայափ ձմերային արուատվայրերը համարվում են Գյուղենյի արուատվայրերը, վորոնք բնկած են Սկանա լճի ափի ուղղությամբ, ապա Ալադյաղի վեհշերի մոտ գտնվող ձմերային արուատվայրերը և Արազդայսնի շրջանում գտնվողները։ Մեր ձմերային արուատվայրերում քիչ են պատահում թիթեռնածաղիկ և հացազդի խոռոչը. այնուղի գերակշռում են յավշանը, վետրախոռոք և պահողային բույսեր։ Զմերային արուատների գլխավոր թերությունը ջրի պակասությունն է։ Յեթէ

ամառը և աշնան անձրեներ չեն լինում, այդ գեղքում ձմերային արոտներում թե՛ ջուր չի լինում և թե՛ բոյցներն են չորանում: Յերբեմն ջրի բացակայության պատճառով վոչխարներին քշում են 8-10 վերտոն հեռու՝ ջրիլու համար, այնպես վոր, վոչխարները ջուր խմելու դնությալու համար կորցնում են կես որ: Անձրեային տարիներին վոչխարը ձմերային արոտներում լավ է կըշտանում, մաքիները ծնելու մոտիկ ժամանակ չեն լղարում, ավելի շատ յերկվորյակ, յեռվորյակ են բերում, զառները կերակրվելու համար առատ կաթ են ունենում, առողջ են լինում, ամրանում են և հիվանդություններին հեշտությամբ են զիմանում:

Արհեստական արոտներ.—Այն շրջաններում և դյուզերում, վորտեղ բնական արոտների տարածությունը փոքր է, իսկ խոչոր և մանր յեղջյուրավոր անասունների թիվը մեծ, այդտեղ պետք է ստեղծել արհեստական արոտներ՝ ցանելով բազմամյա խոտեր—յերեքնուկ, առվույտ, կորնդան և այլն: Արհեստական արոտների առավելությունը բնակոն արոտների համեմատությամբ այն է, վոր արհեստական արոտներում հնարավորաթյուն և լինում ավելի շատ թվով կենդանիներ արածեցնել, քան բնական արոտներում, վորսվհետեւ արհեստական արոտներն ավելի հարուստ են լինում բուսականությամբ, քան բնականները:

Արհեստական արոտներ ստեղծելու համար հարմար են ջրովի հողերը և ամարային արոտատեղերի ստորին մասները, վորտեղ բավականի ջուր կա նրանց ջրելու համար: Արհեստական արոտները կանոնավոր ոգտուդործելու զեղքում հնարավոր և վոչխարներին այնտեղ արածեցնել 5-6 ամիս անընդհատ, ինչ վոր չի կարելի անել մեր ամարային արոտներում: Արհեստական արոտները բացի այն, վոր կերի համար մեծ նշանակություն ունեն, այլև խոչոր արժեք ունեն նաև հողի պըտղաբերությունը բարձրացնելու տեսակետից, վորովհետեւ նրանց վրա ցանվող թիթեռնածաղկեկ բույսերը իրենց արժանաներով հարստացնում են հողը, վորն առանց վորեւ պտրաբացման խիստ ուժասպառ և լինում յերկար տարիներ նրա վրա կենդանիներ արածեցնելուց: Թիթեռնածաղկեկ բույսերի լայն տերենների շնորհիվ մո-

բախստերը սավերի մեջ ևն մնում, թույլ են զարգանում և տեղի յեն տալիս ուժեղ կերպով աճող թիթեռնածաղիկ բայսերին։ Արհեստական արտաներում տաշին տարին անասուններ չի կարելի արածեցնել, քանի դեռ ծիրերը չեն մեծացել և իրենց յերկար արմատները չեն աարածել չողի մեջ։ Իսկ յերկրորդ տարգանից կարելի յէ սկսել անասուններին կանոնավոր արածեցնել։

Արհեստական արտաներ հեշտոթթամբ կարող են անենալ այն գյուղացիները, վորոնք կմիանան և աշխատանքը կատանեն կստպերատից հիմունքներով։

Ողտակար կլինի արհեստական արտաներից նույն ոք անզամ խոս քաղել, առա սկսել արածեցնել անասուններին։ Առասական փորձեական կայտնների (որին Պատավայի, Կորիոլի) սովորվածների համաձար մի գեղատին արհեստական արտաստեղում կարելի յէ կերտակրել 5-6 ամսով ընթացքում Ա-5 անզամ ավելի թվով վոչխոր, քան բնական արտաստեղերում։

Արհեստական արտաստեղերի խնամքը՝ զարնանը հողի վերին շերտը ուժեղ անձրեններից հետո բազմախոփ գութանով կամ յերկաթե փոցիսվ փիրացնելին և, վորպեսզի հողի յերեսը պինդ կեղե չկապի։ Լով կլինի ամեն տարի այդ արտաստեղերը պարարտացնել հեղուկ պարարտանյոթթերով, զոմազբով և մոխրով։

Արտատեղերի բարելավումը և նրանց ոացինալ ոգտագործումը.—Մեր ամարային արտաների բարերավումը պետք և սկսել հենց այժմյանից, վորպեսզի վշանալուց ազատին գոնե այն արտաները, վորոնք պահպել են մինչև հիմա։

Առաջին հերթին պետք և ամարային արտավայրերը պատկեր ավելորդ անասուններից, վորպեսզի արատները չենթիվ քանի պարկեալ բարելավման կարիք են դուռը, որին Մուրզուղի և Թարսաչայի արոտավայրերը համարյա ամբողջովին զրկված են բուսականությունից և անհապաղ բարելավման կարիք են զդում։ Նման տիտուր պատկեր են ներկայացնում նաև Աղմաղանի և Ալադյաղի արոտավայրերը։ Ամենից առաջ պետք և ամարային արտաստեղերը բաժանել մեր վոչխարատերերի և տավաբառտերերի միջև այնպես, վոր նրանք իրենց ու-

նեցած անսառաւնների թվի համեմատ ստանան բավարար տարածության արատատեղ: Մի զյուղի համար հատկացված արոտատեղերը պետք ե կենտրոնացած լինեն մի ակղում, տանց միջանկյալ հողամասերի, և վերցված լինեն թե՛ վերին, թե՛ միջին և թե ներքին մասերից (արյու), վորապեղի վոչխարատեղերը շոգերն ոկտիկուն պես աստիճանաբար վեր բարձրանան—ներքեցից միջին մասը, այդակղից ել վերին մասը՝ տանց հարեան զյուղերի արոտաները կերցնելու:

Այս արոտատեղերում, վորապեղ ջուր չկա, իւամ քիչ կա, պետք ե ջուր բերել կամ արհեստական ջրամբարներ չինել՝ ձյան և անձնելի ջրերը հավաքելու համար: Այդ ջրամբարները պետք ե շինովն այնպիսի տեղ, վորալոր հարեան արոտատեղերից ճանապարհ լինի ոյնտեղ գալու, տանց արոտատեղերը վոտնակոխ անելու: Ջրամբարները կաքոզ են ծառայել վոչ միայն վոչխարին ու տավարին ջրելու, այլև կարող են և հենց հովիզներին՝ խմելու ջուր մատակարարել, բացի այդ, նույն ջրով կարելի կլինի վոռովել մոռտիկ ընկած արոտատեղերը: Պետք ե խրախուսել այն վոչխարատեղերին, վորոնք կմաքրեն հորերը և արհեստական ջրամբարներ կպարատան իրենց վոչխարների համար:

Անհրաժեշտ ե արոտատեղերը մաքրել քարերից, խճերից և զոմազրի խոշոր կտորներից, վորոնք փշացնում են լավ արոտները. հավաքված քարերից կարելի յե պատճեշներ սարքել հարեան արոտատեղերի միջև, իսկ գոմազրը մանրացնել և ցանել արոտատեղիի վրա իրքի պարաբռանյութ:

Արոտատեղերը տարեկ տեսակի անսառանների կրղմից պետք ե ոգտագործվեն համաձայն իրենց վորակի. այսպես՝ ամենալավ, ավելի հարթ տեղերը պետք ե հստկացնել կաթեատու տավարի և յեղների համար. որանից քիչ վատ տեղերը պետք ե հատկացնել չաղացվող և սուրահ տավարի համար, իսկ ամենաբարձր թեք յանջերով, բուռականությամբ աղքատ արոտատեղերը թողնել վոչխարների համար (այստեղ նոյնպես լավ տեղերը պետք ե հատկացնել կթվող մաքիների, գառների և խոյերի համար):

Ինչպես վերին ասվեց, ամարտյին արոտատեղերը

պետք և բաժանել կառրների և նրանց վրա անասուններին արածեցնել հերթով, վորպեսզի թէ անասունները կշտանան և թէ՛ արտաք հանգստանա, նորից կանաչը բարձրանա: Արտատաեղը կառրների բաժաննելոց հետո պետք և այնպես գտավորել, վոր անասուններին քշելու ժամանակ այդ կառրները վոտնակոխ չինեն և նրանցից ամեն մեկը ճանապարհ ունենա զեզի ջրի ահպը: Արտատաեղերի այսպիսի աստիճաննական պատուազման և բարելավման մի շարք միջոցներ գործադրելով, կարելի յե նրանց պահպանել փչանալուց և բարձրացնել նրանց արդյունավետությունը:

Արտատաեղերի այն մասերում, վորտեղ մեծ քանակությամբ մորախոտեր են բաւել, պետք և մինչեւ ծաղկելը քաղելով, կամ այրելու միջոցով վոչնչացնել:

Ամարային արոտատեղերի ներքին մասերում, իսկ տեղունեղ նաև միջին մասերում, վորտեղ կան հարմար աեղեր և վոտովելու համար ջուր, կարելի յե խոտեր ցանել, առաջուց թեթև դութանով վարելուց հետո:

Թիթեռնածազիկ խոտեր ցանելու չնորհիվ վոչ միայն կբարձրանա արտափառ արդյունավետությունը, այլև վոչխարառերերը կարող են այնապես խոտ քաղել ձմեռվա համար: Բացի այդ, խոտերի ցանքը կպաշտպանի այդ արտատերի հոգը բվացվելուց և մերկանալուց:

Այն վոչխարարությունները, վորսնք ամեն տարի միենային աեղն են բարձրացնում, մասածում են միայն, վոր իրենց տավարը լավ կշտանա, իսկ թե արոտատեղը փչանա, այդ նրանց չի անհանգստացնում:

Վոչխարարություններ զարգացնելու և այն արդյունավետ գարճնելու համար անհրաժեշտ է վերջ տալ հին. յետամնաց քոչվորական վոչխարարությունը և անցնել ավելի սացիոնալ ձևերի—սկզբում կիսափառախոյին, ապա և փարախային վոչխարարությունն, վորպեսզի մեր գյուղատնեսության ինտենսիֆիկացիային զուգընթաց սպառողական վոչխարարություն հին քոչվորական ձևը փոխարինվի ավելի նոր, ավելի կատարելագործված արդյունարերական վոչխարարությունը:

Վոչխարների ջրելը.—Զրի վորակն ու քանակը մեծ նշանակություն ունի վոչխարի առողջության համար:

Յեթև վոչխարները խմում են մաքուր, թարմ, հոսող ջուր, այդ գեղքում իրենց շատ լավ են զգում և չեն հիմնդանում քյափանակով։ Վոչխարների համար լավ են համարվում աղբյուրի, գետի, լճի և հորի ջրերը։ Իսկ կանգնած լճակների և ճահիճների ջրերը բոլորովին անպետք են վոչխարներին ջրելու համար։

Վոչխարների ջրի պահանջը կախված է տարվա ժամանակից և կերի վորակից։ — Թարմ կանաչ կերի դեմքում և խոնավ, անձրեային յեղանակներին վոչխարն ավելի քիչ ջուր և պահանջում, քան թե չոր, աղի խոտի դեմքում և չորային յեղանակին։ Չմեռը վոչխարներին ջրում են 1—2 անգամ, ամառը 2 անգամ։ Վոչխարներին ըրհորի ջուր խմացնելիս պետք է ուշադրություն դարձնել, վոր ջրի տաշտերում ջուրը կանգնած չմնու և առշատերը միշտ մաքուր լինեն։

Վոչխարներին աղ տալիս են շարաթը մեկ անգամ, իսկ ամառը՝ ամիսը 2 անգամ, ամեն մեկին 15—20 գրամ։

Վոչխարների բտումը։ — Վոչխարների բտումը յինում և յերկու առաջի 1. արտայային բտում — արածեցնելու միջոցով և 2. փարախային բտում — փարախում ուժեղ կերել կերցնելով։ Մեզ մոտ գոյություն ունի միայն արտայային բտում, իսկ արտասահմանում — Ամերիկայում, Անգլիայում և այլ յերկրներում — տարածված է փարախային բտումը։

Վոչխարների արտայային բտումը ամենաեժանն է և մեր վոչխարատերերին մատչելի։ Այսպիսի բտման գեղքում բարձրանում և մսի ու ճարպի վորակը։ Վոչխարների արտայային բտումն սկսվում է զառներին ծծից կորելուց հետո։ Բտվում են՝ արորձատվածները, խոտանիված մաքիները և զառները։ Բտման համար անպետք են շատ պառավ, նիհար և հյուծված վոչխարները։

Վոչխարների արտայային բտման հաջողությունը կախված է արտաի վորակից, նրա կանաչի բարձրությունից և արտաները ողտագործելու ձեից։

Յեթե արտար չի բավականացնում, այդ գեղքում բայց վոչխարներին կերակրում են նաև չոր խոտով կամ ուժեղ կերերով։

Փարախային բտում։ — Փարախային բտման համար նշանակված վոչխարների պահելու տեղը պետք է լինի

մաքուր, չոր և տար: Վոչխարներին բաելիս բաժանում
են խմբերի—ըստ սեռի, ըստ մեծության և ըստ ախոր-
ժակի: Բաման սկզբի շրջանում տալիս են լավ խոտ,
քուսպ, թեփ, յեղիպատցորեն և այլն, իսկ վերջում՝
ուժեղ կերերը փոխարինում են դարու ալյուրով:

Աղ քիչ են տալիս: Զրում են 2 անգամ: Զպեաք և
մոռանալ, վոր վորքան շուտ և վերջանում բառում,
այնքան նա ավելի հժան և նստում:

ՎՈՉԽԱՐՆԵՐԻ ԽՆԱՄՔԸ

Վոչխարների ձմբան խնամքը հետեւյալն ե—պետք ե
նրանց կանոնավոր և ժամանակին կերակրել ու ջրել.
փարախի ողը մաքուր պահել, ամեն որ դրսանքի
դուրս բերել. կռվել յերեացող պարագիաների և մի-
ջատների դեմ, հոգ տանել վոչխարների պճեղների մո-
սին. հին ցամքարը հավաքել և փոխարենը թարմը
փուել. պաշտպանել և թժկել զանազան վնասվածքների
և հիվանդությունների դեպքում:

Վոչխարներին կեզառոտ պահելիս նրանց վրա առաջ
են զալիս տիղեր և վոջիներ, վորոնք խիստ անհանդրս-
տացնում ե հյուծում են նրանց: Վոչխարների վրա կամ
փարախում նման պարագիտներ յերեալիս պետք ե խը-
նամքով ախտահանել բոլոր մսուրներն ու կերամանները
կարբույան թթվուտի. Յ տոկոսանի լուծույթով կամ
ծխախոտի թունդ լուծույթով, իսկ վոչխարներին նույն
այդ լուծույթով լողացնել:

Փարախի պատերն անհրաժեշտ ե ժամանակ առ ժո-
մանակ սպիտակացնել կրի թունդ լուծույթով, վոր-
պեսզի վոչնչանան միջատները, քոսի և այլ պարագիտ-
ները: Ընդհանրապես գառներին և հասակավոր վոչ-
խարներին պետք ե պաշտպանել ուժեղ շոգից, ցրտից,
քամիներից և բուքից. նրանց պետք ե հատկացնել չոր,
տաք, լուսավոր ու միջանցուկ քամիներից աղատ չենք:

Ավելի հեշտ ե կանխել վոչխարների հիվանդու-
թյունները, քան թե նրանց թժկել:

ՓԱՐԱԽՆԵՐԸ

Փարախոք շինվում և վոչխարներին շոպից, ցրտից, տժեղ անձրեներից, քամբիներից, ձնարուքից և այլն պաշտպաննելու համար։ Փարախ կառուցելու համար պետք է ընարել բավական բարձր, չոր, բաց տեղ, փորոքնազի մեզը և այլ հեղուկները հեշտությամբ փարախից դարս հանեն, հակառակ զեղքում փարախում կառաջանա խոնավություն, վորին վոչխարները չեն դիմանում և կարող են հիմանդանալ։

Տաք շրջաններում փարախների ճակատը շինում են հյուսիս-արևելյաք կոմ արևմուտք, իսկ շուրջ շրջաններում՝ հարավ և հարավ-արևելյան կողմի վրա։

Մեր վոչխարաբույժները վոչխարների համար շինում են հյուզեր (ՅԵՄԼԱԿԻ) և ծածկում են կազմու, զիհենու և այլ զերաններով, վորոնց վրա լիցնում են ցախ կոմ զործած խոթիներ և այդ լուլորը ծածկում են հողով։ Այդ հյուզերը իրենց կողքերից անցքեր ունեն, վորոնցավ ներսը լուսավորվում և և ողբ մաքրվում և Ռւժեղ ցրտերի և քամբիների ժամանակ այդ անցքերը ծածկվում են յեղեգնով կամ խոտով։ Մուրներ չկան, վոչխարներին կեր տալիս են զեսնին։ Գոմազրը զուրս ևն տանում ամեն որ։ Այս տեսակ փարախներն եժան են նաև, բայց նրանց մեջ լոյսը քիչ և։ Խոյեցին, հզի մաքիներին և զաններին թե՛ մհացած վոչխարներից և թե՛ իրարից բաժանում են բարձր զործած ճաղերով։ Գառնեցի համար զիխավոր փարախին կից շինում են ուսանձին փաքք տեղ, իսկ յերեւն ել հենց բնդհանուր փարախի մեջ մի տնկյուն ցանկապատով բաժանում են և հատկացնում նրանց։

Դանունավոր կառուցված փարախից պահանջվում է, վոր նա լինի ընդարձակ, չոր, տաք, լուսավոր, բավ ողափոխի, և շինված լինի այնպես, վոր կեր բաժանելը և փարախի մաքինը, վորքան կարելի յե, քիչ ժամանակ և աշխատանք պահանջի։ Լավ փարախում պետք է լինեն առանձին բաժիններ խոյերի, հզի մաքիների, արու և եղ զանների, ծծից նոր կտրածների համար։

Պետք է նույնապես առանձին տեղ լինի վարակիչ հիվանդ մոշխարների համար : Առանձին բնակարան պետք է լինի հայիսիների համար : Կերերը պահելու համար պետք է լինի ամրար, իսկ վոչխարներին խուզելու . համար՝ հապուել տեղ :

Փարախը պետք է ունենա հետևյալ վակարդակը .—

Մեկ խոյի համար պահանջվում է 1¹/₂-2 քառ. մետր .

« մաքու	«	«	0,8-1	«	«
---------	---	---	-------	---	---

« կոտանի	«	«	0,8-0,8	«	«
----------	---	---	---------	---	---

« շիշակի կամ խոյի համար	0,5-0,6	«	«
-------------------------	---------	---	---

Միջին հաշվով մեկ վոչխարի համար ընդունում են 0,75-0,9 քառ. մետր տարածություն :

Փարախի բարձրությունը սովորաբար 3,5-4,3 մետր և լինում . այդ կախված է վոչխարների թից . վարժան շատ և վոչխարը, այնքան փարախը բարձր են շինում :

